

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՅԼ ԲՆԻԿՆԵՐԻ ԵՒ
ԿՈՎԿԱՍԵԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՑՈՒԹԻՒՆԸ
ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ^(*)

Երբ Արմէնները (հայերը) յառաջացան Խաղիա, քնականարար մի անգամից ամբողջ երկիրը չլցրեցին, այլ նախ արեւմտեան գաւառները, յետոյ դէպի կենտրոնը և ապա դէպի հիւսիս, հարաւ և արեւելք: Այսպէս հայերը նախ մտան Ծոփաց աշխարհը, յետոյ Տուրուբերան, մինչև Վանայ ծովի արեւմտեան եղելքը. այս տեղից նրանք դիմեցին դէպի հարաւ՝ Աղձնիք և դէպի հիւսիս՝ Այրարատ: Քաննոփոնի ժամանակ (401 թ.) Հայաստանը տարածւում էր վերին երասխից մինչև Բուտան – սու։ Կորդուացիք առանձին ու անկախ ժողովուրդ էին, ինչպէս և Տայեցիք, խալդերը և Փասիանցիք: Ն. Ք. 190 թուրին, երբ Զարեհ և Արտաշէս հիմնեցին անկախ հայկական թագաւորութիւն, առաջինը իր իշխանութեան տակ ունէր միայն Ծոփքը, Հանձիթը և ուրիշ մի քանի գաւառներ.

(*) Վեցուած՝ մեծանուն նեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գարծէն (Ը. Գլուխ):

իդ. — Գէորգ Եպս. Կ. Պոլսկի, 17-82 - 99, օրինակած է ի Ս. Էջմիածին,
1. — Պատմութիւն, Ստեփանոս Ասողիք, 1782ին. — Կար. թ. 1649:

2. — Քարոզիք, Մինաս արքեպիսկոպոսի, 1799ին. — Կար. թ. 2202: Արարատ, 1893, էջ 356-8:

իե. — Զաքարիա Արեղայ, 1790-93, օրինակած է ի Ս. Էջմիածին,

1. — Քարոզիք, Սիմէոն կաթողիկոսի, 1790ին. — Կար. թ. 2192:

2. — Արիստոկիլ Սուրողութեանց Վերլաւութիւն, Սիմէոն կաթողիկոսի, 1792-3ին. — Կար. թ. 1906:

Ն. Վ. ՇԹՎԱԿԱՆ

իսկ Արտաշէս՝ իշխանմ էր միայն Այրարատի մի մասի վրայ: Արանից հետեւում է որ հայաշատ վայրերը միայն այս նահանգներն էին: Հիմունիով Ստրաբոնի տուած տեղեկութեանց վրայ՝ Հիւրշմանը գտնում է որ այդ ժամանակ հոծ հայութիւն կար Այրարատի և Տուրուբերանի մէջ, օտար տարրերով խառն հայութիւն կար Ծոփաց և Աղձնեաց մէջ. իսկ Հայաստանի միւս նահանգների բնակչութիւնը բաղկացած էր զանազան օտար տարրերից և հայերը գեռայդ տեղերը ուտք չէին կոխուծ: Զարեհ և Արտաշէս ընդարձակուում են իրենց երկիրը՝ օտար աղքերից խլելով նոր հողամասեր. այսպէս Մարերից խլեցին Փայտակարանը, Փաւնիստիը (Սիւնիք) և Վասպուրականը. Վրացիներից խլեցին Տայքը, Կղարջքը և Գուգարքը. խալիբներից և Մասրինացիներից խլեցին Կարինն ու Դերջանը, կատառնացիներից խլեցին Եկեղիքը, իսկ Ասորիներից՝ Տմորիքը: Ուրեմն այդ նահանգների ու գաւառների ժողովուրդները մար, վրացի, խալիք, մասինացին կատառնացին ասորի և անշուշտ նաև խալդիներ են: Շուտով հայացան Սիւնիքը, Վասպուրականը, Բարձը Հայքը և թերեւ Մոկք. մասամբ և մակերեւութարար հայացան Կորդուք, Արցախ, Ուտի, Գուգարաց հարաւային մասը և Տայք. իսկ Պարսկահայք և Փայտակարան միշտ օտար մասին ու բնաւ չհայացան: Մինչև Զ. զար Ծոփաց մէջ գեռ մնում են Ուրտացիք, որոնք խօսում են մի առանձին լեզու. մինչև Ժ. գար՝ Ասորիները, Խութեցիք և Սասնեցիք իրեւ առանձին ժողովուրդներ ապրում են Հայաստանի հարաւային նահանգներում և ունեն իրենց սեփական լեզուն, իսկ Առանցիք (աղուանական մի ցեղ) Ուտիի մէջ: Այս վերջին նահանգում թ. գարից յիշւում են Սեւորդիք, որ համարում են հունգարական մի ժողովուրդ: Վանայ ծովի արեւելեան կողմում (Մարդաստան գաւառի մէջ) բնակում էին Մարդացիք, որոնք յիշւում են Քսենոփոնի ժամանակ և իրենց գոյութիւնը գեռաչարունակում են ներոնի օրով (54-68): Հերոդոտոս յիշատակում է նաև Սասպիրացիները (Հայաստանի հիւսիսային կողմում, Սպերի մօտ), Մատիացիները՝ Վանայ և Ուրմիոյ լճերի միջև, և Պակտիացիները՝ Հայաստանի հարաւային կողմում:

Այսպէս ուրեմն Հայաստանի հողի վրայ բնակւում էին բացի խալիքներից՝ 18 դաշնագան բնիկ ժողովուրդներ իւրաքանչիւրը իր առանձին ու սեփական լեզուով։ Այդ բոլոր ազգերը կամաց կամաց ծովուեցան հայոց մէջ և հայերէն լեզուն ընդհանուր դարձաւ Հայաստանի ամէն կողմը։ Ստրամոն (Ա. դար) ասում է որ իր ժամանակ (այժմ) արգէն բոլոր նուանուած նահանգները հայախօս էին դարձել (հոստէ պանտաս հոմոգլոտոտուս էյնայ)։

Այս բոլոր ազգութիւնները հայանալու և հայախօս դառնալու ժամանակ անշուշտ պահեցին իրենց բնիկ լեզուից որոշ հետքերը որոշ բառեր, յատկապէս տեղական նշանակութիւն ունեցող բառերից, ինչպէս բոյսերի անուններ են, մտան հայերէն լեզուի մէջ կամ իրբե տեղական բարբառային ձեւեր կամ նոյն իսկ կարողացան տարածուել ընդհանուր հայերէնի մէջ։ Չունենալով ոչ մի տեղեկութիւն այդ լեզուների մասին, բնականաբար չենք կարող որոշել նրանց ազդեցութեան չափը։ Այդ լեզուներից փոխառեալ բառերը գըտնւում են հայերէնի չմեկնուած բառերի շարքում։

Սակայն եթէ այս բնիկների լեզուն մեզ ծանօթ չէ, ընդհակառակը շատ լաւ գիտենք Կովկասեան զանազան ազգերի լեզուները, որոնցից ոմանք նոյնպէս գըտնւում են Հայաստանի նախարանիկների թւում և յետոյ հայացել են։ Ուստի, բուն նիւթի քննութեան անցնելուց առաջ, տանք մի ընդհանուր տեղեկութիւն Կովկասեան լեզուների վիճակազրութեան եւ նրանց լեզուաբանական ցեղակցութեան մասին։

Կովկասեան լեռնաշղթայի երկու կողմերում խօսւում է 40 լեզու, չհաշուելով հնդեւրոպական ցեղերի լեզուները (ինչպէս՝ ուսւու, հայ, օսեթ, թաթերէն, լահճերէն ևն.) և թուրք թաթարական ցեղերի լեզուները (ինչպէս՝ նողայ, թուրք, թաթար ևն.)։

Այս 40 լեզուները բաժանում են 2 խմբի։

ա) Հարաւային Կովկասեան լեզուախումբ։
բ) Հիւսիսային Կովկասեան լեզուախումբ։
Հարաւային խումբը պարունակում է հինգ գլխաւոր լեզուներ, որոնք են՝ վրացերէն, ինգելոյ, մինզրելերէն, լազերէն և

սւաններէն։ Հիւսիսային խումբը բաժանւում է երկու ճիւղի, արեւելեան և արեւմտեան։ Արեւելեան ճիւղը, որ կոչւում է նաև չեչենո-լեզգիական, ունի 8 ընտանիք։

1. Չեչենական ընտանիք (չեչէն, բացկամ թուշ, ինգուշ լեզուները)

2. Աւարո-անդի ընտանիք (աւարերէն, անդի, բոլիխ, գոգոբերի, կարատա, ալուալ, բազուլալ, դինդի, ճամալալ, խվարչի, գիգօ, կապուճի)

3. Լակ կամ կազիկումուխ

4. Արճի

5. Դարգվա (խիւրքիլի, աքուշա, քայտաղ, կուրաճի)

6. Սամուրեան ընտանիք (քիւրի, աղուլ, թարասարան, ուուտուլ, ցախուր, բուղուխ, ջէկ)

7. Ուտի

8. Խինալուղ

Արեւմտեան ճիւղը, որ կոչւում է նաև Արասօ-կերկէտ, պարունակում է՝

1) Ադիգէ (չերքեզերէն, կարարգին)

2) Ուրիխ

3) Ափխազերէն լեզուները։

Այս բոլոր լեզուները որոշ չափով ծանօթ են գիտութեան։ Հաստարակուած են բառարաններ, գերականութիւններ և զանազան բնագիրներ։ Յատկապէս քննուած են վրացերէնը (իբրև այս բոլորի մէջ ամէնից քաղաքակիրթ ազգի լեզուն), լազերէնը և ափխազերէնը։ Սակայն այնուամենայնիւ գեռ չկան գիտական մեթոդով պատրաստուած ուսումնասիրութիւններ և մենք չգիտենք այս զանազան լեզուների ցեղական կապը։ Ամենից աւելի յայտնի է հարաւային խմբի դրութիւնը։ Այս խումբը կազմով 5 լեզուները յայտնի կերպով մէկ աղբեւրից են յառաջանում և իրար հետունին ճիշտ այն յարաբերութիւնը, ինչ որ օրինակ՝ սեմական լեզուները իրար հետուայց թէ արգեօք հիւսիսային Կովկասեան լեզուներն եւ բոլորը իրար հետ ցեղակից են, աւելի ևս թէ արգեօք նրանք կապ ունին հարաւային Կովկասեան լեզուների հետ թէ ոչ՝ յայտնի չէ։

Գաղափար տալու համար այս լեզուների յարաբերութեան մասին, գնում ենք այստեղ 1-20 թուականները հինգ գլխաւոր լեզուներով։

Վրացերեն	լազերեն	կաբարդին	ուսի	չեշեն
1. էրթի	առ	գղը	սա	ցատ
2. օրի	ժուռ	թու	փա	շիւ
3. սամի	չում	ցը	խիբ	զոր
4. օթիսի	օթիս	փուլը	բիպ	գիլը
5. խութի	խութ	տխու	կխօ	պիխիլ
6. էքվահ	անչ	խը	ուկիս	յալիս
7. չվիգի	չքույթ	բլը	վուղ	վուհ
8. բվա	օրվօ	յի	մուղ	բառհ
9. ցիրա	չխօրօ	բդու	վույ	իս
10. աթի	ուկիթ	պցը	վիծ	իտ
20. օցի	էչ	թոց	զա	տղը

Եթէ հարաւային և հիւսիսային կովկասեան լեզուները տարրեր ճիւղերի են պատկանում, ուրեմն հայերէնի մէջ ունինք երկու տարրեր ներկայացնուցիչներ, որովհետեւ հիւսիս - արեւմտեան սահմանում վրացական ժողովուրդներ են, որ հայացել են, իսկ հիւսիս - արեւելեան սահմանում առանցիք այն է ուտէցիք:

Այն բառերը՝ որոնք հասարակաց են հայերէնի և վրացերէնի կամ ուրիշ կովկասեան որ և է մի լեզուի, թուով 900 հատ են: Այս բառերի մի մասը, և անշուշտ մեծ մասը, վրացերէնը և միւս կովկասեան լեզուները փոխ են առել հայերէնից, քանի որ այդ ժողովուրդները պատմական շրջանում ընդհանրապէս գտնուել են հայկական կուլտուրայի և քաղաքական ազգեցութեան տակ: Բայց անուրանալի է՝ որ հնագոյն շրջանում հայերն էլ ունեցել են փոխառութիւններ, ինչպէս յիշեցինք վերեւում, թէ վրացերէնից և թէ կովկասեան միւս լեզուներից: Լեզուաբանների գործը պիտի լինի մաղել այդ 900 բառերը, որոշել ու հաստատել թէ զրանցից որոնք փոխառութիւն են հայերէնից վրացերէն և որոնք ընդհակառակը կովկասեաններից անցել են հայերէնի: Այս նպատակին հասնելու համար մենք ունինք հետեւեալ միջոցները:

1. Այն բառերը՝ որոնք հայկական կազմութիւն ունին, օրինակ ածանցուած են որ և է հայերէն մասնիկով կամ ներկայացնում են հայկական մի բարդութիւն, մինչդեռ նրանց արմատը չկայ կովկասեան լեզուների մէջ, բնականաբար փոխառեալ են հայերէնից: — այսպէս վրաց: նիվիթ անիւթ,

տարր», նիվիթ «նիւթական» բառերը անշուշտ փոխառեալ են հայերէնից, որովհետեւ նրանց մայրը, որ է նիւթ, ունի հայկական կազմութիւն (նի մասնիկով նիւթ արմատից) և այդ նիւթ արմատը գոյութիւն չունի վրացերէնում: Նոյնպէս վրաց: մատարելա, ուտ. մատկատիլ «չղջիկ» բառերը անշուշտ փոխառեալ են հայերէն մատկարեւ համանիչից, որովհետեւ սա զուտ հայկական բարգութիւն է և վրացերէնում կամ ուտերէնում գոյութիւն չունեն առանձին մատկ և թեւ արմատները:

2. Այն բառերը՝ որոնց ծագումը գիտենք թէ հնդեւրոպական է, բնականաբար փոխառեալ են հայերէնից և ոչ թէ հակառակը, վրաց: ութնորա «խօսակցութիւն», բորբոքի «զայրանալո», նումի, ումի «հում», վրաց: միմիե «գորչ», լազ: մղ «միսալ», ուտ: մուղ «մուր», վրաց: նավի «նաւ» ևն. փոխառեալ են հայերէնից, որովհետեւ սրանց մայրը (հյ. բան, բորբոք, նում, մուլ, նու) հայերէնի հնդեւրոպական բառերից:

3. Պատահում է որ երբեմն նախորդ երկու պայմանները միանում են մէկ բառի վրայ: այս պարագային հայերէնից փոխառեալ լինելը ապացուցում է կրկնակի փաստով: այսպէս վրաց: հասակի, ասակի «տարիք», ահասակ, բարձրութիւն», ասակովանի «հաստակաւոր», ուսակո «անչափահաս» բառերը անշուշտ փոխառեալ են հայերէնից, որովհետեւ նրանց մայրը նաւակ, թէ՛ ունի հայկական կազմութիւն (ակ մասնիկով հասանել արմատից) և թէ այդ հաս արմատը հնդեւրոպական ծագում ունի ու չկայ վրացերէնում: — Նոյնպէս վրաց:

սաստիկի «կարծը», անգութ, խիստ» (հմմտ. սաստիկի քարի «սաստիկ քամի», բաստիկի կացի և անգութ, գաժան մարդո), սաստիկորա «կատաղութիւն, բռնութիւն» անշուշտ փոխառեալ են հայերէնից, որովհետեւ նրանց մայրը, սաստիկ, թէ ունի հայկական կազմութիւն (իկ մասնիկով սաստիկատից) և թէ այդ սաստիկ արմատը հընդերոպական ծագում ունի:

4. Կան բառեր՝ որոնք զուտ վրացական ածանց են, բայց նրանց արմատը պակասում է վրացերէնում և կայ միայն հայերէնում: Այսպիսի բառերը եթէ նոյն իսկ հայերէնի մէջ իրենց մեկնութիւնը չունենան, դարձեալ փոխառեալ են հայերէնից վրացերէն և ոչ թէ հակառակը: Օրինակ վրաց . մոկրիվ՝ որ նշանակում է «ըմրիչ», զուտ վրացական կազմութիւն ունի: Այս լեզուի մէջ մո, մե նախամասնիկը դրուելով արմատի վրայ և բառի վերջում աւելացնելով ե ձայնաւորը, ստանում ենք «արհեստաւոր կամ նոյն գործով զբաղւող մարդ»: այսպէս մեծալկոտե «պարտիզապան», մենափե «նաւաստի, նաւազար», մեմարգե «աստղագէտ, վհուկ, կախարդ» ու մեքուգե «գդակ կարող» են. ևն. այս-

պէս էլ մոկրիվե «ըմրիչ» բառի արմատն է կորիւ: Արդ՝ այս արմատը չկայ վրացերէնում և միայն հայերէնի մէջ՝ կորիւ ձեւով: Այս հանգամանքը ցոյց է տալիս որ մոկրիվե «հայերէնից փոխառեալ (թէ վրացական մասնիկով ածանցուած) մի բառ է:

Այն բառերը՝ որոնք հայերէնը փոխ է առել ասորերէնից, պահաւերէնից, երբեմն էլ յունարէնից և միեւնոյն ժամանակ զըտնուում են վրացերէնում կամ միւս կովկասեան լեզուներում, անշուշտ փոխառեալ են հայերէնից վրացերէն են., և ոչ թէ ընդհակառակը: Արդարեւ վրացիք և միւս կովկասեան ժողովուրդները չլինելով ուղղակի հարեւան ասորիներին, պահաւներին և մասամբ էլ յոյներին, չէին կարող նրանցից ուղղակի փոխառութիւններ կնքել: Ուստի բնական է ենթադրել որ այդ կարգի փոխառութիւնները հայոց միջոցով անցել են կովկաս: Սրան իրեւ ապացոյց ծառայում է նաև այն հանգամանքը՝ որ այդ կարգի փոխառութիւնները եթէ որոշ ձայնական փոփոխութիւնների ենթարկուել են հայերէնի մէջ, այդ ձայնական փոփոխութիւններով գտնում ենք նաև վրացերէնում և: Օրինակ՝

զմրուխտ	իրան.	զումուրրուֆտ	վրաց.	զուրմուխտի
գանձ	պհլ.	զանջ	»	գանձի
անդամանդ	յն.	ադամանտոս	»	ադամանտի
անդերձ	պհլ.	անդարզ	»	անդերձի
բագ են	երր.	բագդիմ	»	բագենի
բազմակ	ասոր.	մազմակ	»	բազմակի
հրապարակաւ	պհլ.	ֆրավարդակ	»	ուրակպարակագ
հրովարտակ	պհլ.	ֆրավարտակ	»	բուրտակի
հրեայ	ասոր.	իհոգայա	»	հուրիս

Այս բառերից մի քանիսը շատ բնորոշ են իրենց ձայնափոխութեան տեսակէտով. օրինակ՝ հրեայ < իհուդայա բառի մէջ նախաձայն ի-ի անկումը զուտ հայկական օրէնք է. նոյնիսկ դ-ի ձայնափոխութիւնը. այս ձայնը իրենց լեզուի մէջ չունենալով հայերը դարձնում էին միշտ ։՝ թէ՝ ասուրերէն և թէ պահաւերէն փոխառութեանց մէջ. ինչպէս՝ ապարանք < հպրս. ապարանա, շամփուր ասոր. շապարուտա, սպարապետ հպրս. սպանդապատի են. վերջապէս եայ զուտ հայկական մասնիկ ։՝ որ փոխանակուել է հայոց մօտ ասորական այլա

մասնիկի հետ (հմմտ. քրիստոնեայ, քաղդայ): Այս բոլոր ձեւափոխութիւնները միաժամանակ գտնում ենք վրաց. հուրիա բառի մէջ: Զմրուխտ < զումուրրուֆտ բառի մէջ Ֆ-ի ձայնափոխութիւնը զուտ հայկական յատկութիւն է. հայերէնը չունենալով Ֆ ձայնը՝ պահաւաւական փոխառութեանց մէջ Տ բաղադայնից առաջ դարձնում էր իւ. ինչպէս պրս. հազարաֆտ > հազարաւուխտ, պրս. զարն-ուֆտա զառնաւուխտ, հրովարտակ և հրապարակ բառերի մէջ Ֆ-իր ձայնափոխութիւնը զուտ հայկական է և յատուկ հնագոյն հայե-

րէնի բառերին . վրացերէն բուարտակի և ուրակպարախան ձեւերը չէին կարող յառաջանալ , եթէ իրանցից առաջ չլինէին ի նախաձայնով սկսող ձևերը . վրացերէն լեզուի ձայնաբանութեան մէջ չկայ մի այնպիսի օրէնք , որով նախաձայն Ֆ ջնջուի :

Այս բոլորից պարզ է ուրեմն այն՝ որ ասորական , իրանական և մասամբ էլ յունական փոխառութիւնները հայերէնից անցել են Վրաստան և կովկաս , գոնէ հնագոյն ժամանակներում : Աւելի յետոյ , երբ պարսիկները և յոյները յառաջացան կովկաս , փոխառութիւնները կարող էին լինել ուղղակի :

5. Վրացական գրականութիւնը սկզբնական ըրջանում մեծ չափերով օգտուել է հայ գրականութիւնից . Ա. Գիրքը և ուրիշ զանազան գրուածքներ վրացիները թարգմանել են հայկական օրինակից : Այդ թարգմանութեանց ժամանակ , ինչպէս բնական էր սպասել , այլ և այլ բառեր իրեւ պարզ տառագարձութիւն անցել են վրացերէնի : Այս կարգի բառերը , ինչպէս և առ հասարակ այն բառերը՝ որոնք վրացական գրականութեան մէջ հազուադէպ գործածութիւն ունին , փոխ առնուած պէտք է լինեն հայերէնից և ոչ թէ ընդհակառակը :

6. Այն բառերը՝ որոնք հակառակ առաջին պայմանին , ունին կովկասեան կազմութիւն , կամ նրանց արմատը կայ վրացերէնում կամ ուրիշ կովկասեան լեզուներում , բայց չկայ հայերէնում , բնականաբար փոխառեալ են կովկասեաններից հայերէն : Այսպէս հյ. ոչխար բառը իր նմաններն ունի լազ . չխուի , մինդ . օխուրի , վրաց . ցխովարի , ինգիլ . ցխօր հոմանիշների մէջ : Բայց այս բառը հայերէն չէ , այլ փոխառեալ է կովկասեաններից , քանի որ արմատը չխ-ցխ գոյութիւն ունի վրացերէնի մէջ և նշանակում է պիետ , ապրիլ , այս արմատից են վրաց . ցխովիլի և չափանոր , անասուն , ցխովերա և կեանք , կենսագրութիւն , պատմութիւն , սացիուլարի պիետական , ուտելիք , սնունդ , բնակութիւնը ևն . ըստ այսմ ցխովարի «ոչխար» նշանակում է բուն պիենդանի :

7. Այն բառերը՝ որոնք հայերէնի մէջ սահմանափակ և միայն տեղական գործածութիւն ունին , մինչդեռ կովկասականների մէջ աւելի ընդհանուր են , բնականաբար

փոխառեալ են կովկասեաններից հայերէն և ոչ թէ հակառակը : Այսպէս ծես բառը հայ մատենագրութեան մէջ շատ ուշ ժամանակ միայն գործածուած մի բառ է (առաջին անգամ Ասկեփոր) և բարդ ու ածանց ձեւեր էլ չունի . նոր զրական լեզուն է միայն որ կենդանութիւն տալով նրան , կազմել է զանազան բառեր . ինչպէս՝ ծիսական , ծիսարան , ծիսակատարութիւն , հայեծէս , յունածէս ևն : Սրան հակառակ նոյն բառը կին ժամանակից սկսած շատ կենդանի է վրացերէնում , ուր ունի բազմաթիւ ածանցներ . ինչպէս՝ ծեսի «կարգ , բնութեան օրէնք , կարգագրութիւն , կանոն , եկեղեցական ծէս , սովորութիւն , բնութիւն , բարք , ծեսերա «կարգագրել , կարգագրել», զածեսերա «կանոն , հաստատութիւն , հրաման , կարգ» , զանձեսերա «կարգագրութիւն , հրաման , կարգ» , զանձեսերա «կարգագրութիւն , կարգագրել , կանոնաւորել», մոծես «բնկերութիւն , անդամ , քահանայ , աբեղայ , կրօնաւոր» , ուծես «անկարգ , խառնակ , անկանոն» , ուծեսը «խառնակութիւն , անկարգութիւն» : Այս հանդամանքից հետեւում է որ ծես բառը փոխառեալ է վրացերէնից :

Դժբախտաբար կարելի չէ բոլոր 900 հայ-կովկասեան բառերը վերոյիշեալ 7 կետերի համեմատ մեկնաբանել և կան շատ այնպիսի բառեր , որոնց համար կարելի չէ ասել թէ ով է փոխառուն և ով է փոխառուն , գոնէ եթէ ուղենանք վերաբերուել զիտական սկեպտիկ վերաբերմունքով : Այսպէս օրինակ՝ ծայր բառը գտնում ենք նաև վրացերէնի մէջ ծվերի ձեւով , բայց վճռել թէ սրանցից որն է փոխառեալ՝ կարելի չէ :

Մի կողմ թողնելով հայերէնից փոխառեալ կովկասեան բառերի հարցը՝ որ մեր ներկայ նիւթից դուրս է և քննութեան առնելով միայն հայերէնի փոխառեալ բառերը , մենք կը տեսնենք որ այս բառերը բաժանում են երեք տարբեր խմբի :

1. Այն բառերը՝ որոնք գտնուում են հայերէնի և հիւսիսային կովկասեան լեզուների մէջ և չկան վրացական խումբի մէջ : Այսպէս օրինակ՝ խոս , որի հետ նոյն են արչ . խոտու . անդ . խորդո , խոտ , խոտաէ «արմատ» ուտ . խոդ , ավար . զուէտ . ածառ , ուռտ . խիւտյ , ցախ . խիւտա «գարի» : Այս

կարգի բառերը հայերէնի այն փոխառութիւններն են՝ որ կատարուել են հիւսիսային կովկասեան լեզուների խմբից։

2. Այն բառերը՝ որոնք գործածական են մեր Ե. դարի գրականութեան մէջ և գտնուում են նաև վրացական խմբի մէջ ու չկան հիւսիսային կովկասեան լեզուների մէջ։ սակայն վրացական խումբի մէջ էլ

նրանք ոչ թէ առանձնապէս նման են վրացերէնին, այլ աւելի լազերէնի ու մինզրելների։ Յայտնի է որ վրացական խմբի լեզուները երկու կարգի են բաժանուում։ մի կողմում գտնուում է վրացերէնը, միւս կողմը՝ լազերէնն ու մինզրելերէնը։ օրինակ՝ առաջինի ծ, ձ, ց, ձայների գէմ միւսներ՝ մէջ գտնուում ենք միշտ ն, ջ, չ, չ, օրինակ՝

Վրաց.	ծերի	«ճանճ»	—	լազ.	մճաջի
»	ցա	աերկինք»	—	»	չա
»	ցիրա	աինը»	—	»	չիսօրո
»	ցրամլէ	աարցունք»	—	»	չէրամուլէ

արդ՝ հայերէն հին փոխառութիւններն էլ ներկայացնուում են ն, ջ, չ և ոչ թէ ծ, ձ, ց, ինչպէս՝ ոչխար լազ. չխուրի, վրաց. ցխովարի, ճանճ, լազ. մճաջի, մինդ. ճանջի, վրաց. ծերի։

Այս նմանութիւններից ի հարկէ պէտք չէ հետեւցնել թէ փոխառու լեզուն լազերէնն է կամ մինզրելերէնը. որովհետեւ եթէ այս և նման կէտերում լազերէնն ու մինզրելերէնը համապատասխան են հայերէնին, ուրիշ կէտերում էլ չեն. այսպէս հենց վերի ձեւերից հայերէն ոչխար իրապէս ոչ մի լեզուի համապատասխան չէ. նախաձայն ո ձայնաւորը պակասում է բոլորի մէջ։ Նոյնպէս նաևն բառի վերջաձայնի գէմ միւսների մէջ գտնում ենք չ և ոչ ն։ Հայկական տոմարի 2-րդ և 3-րդ ամիսները (Հոռի, Սահմի) որոնք ձեւացած են վրացական լեզուախմբի 2, 3 թուականներից, իրապէս նման չեն ոչ մէկի հետ. հմմտ. վրաց. օրի, հերի, մինդ. ծերի, ժուրի, ինդ. օր, օօր, սվան. օրի, հերի, յերվի, լազ. ժուր, ձուր, ջուր, «երկու», — վրաց. սամի, ինդ. սամ, մինդ. սումի, շումի, լազ. սում, շամ, ժում, սվան. սեմի «երեք»։

Թէ առանձնապէս վրացերէնը (գոնէ որոշ գէպքերում) հեռու է հայերէնից՝ ցոյց է տալիս նաևն բառի վրաց. ծերի ձեւը։ Վրացերէնի ձայնաբանութեան օրէնքներով բ համապատասխանում է խմբի միւս լե-

զուների չ, նշ, ձայներին, ինչպէս՝ վրաց. ցվարի — մինդ. ցունջի «ցօղ», վրաց. ձիրի — մինզր. ջինջի «արմատ», վրաց. քմարի, լազ. քոմոչի, մինզր. քոմոնջի «ամուսին» ևն։ Որքան հեռու է բ ձայնը չ, նշ խմբից, այնքան էլ մօտիկ են լազերէնը ու մինզրելերէնը հայերէնին։

Այս բոլորից հետեւում է՝ որ հայերէնի հնագոյն փոխառութեանց իրր աղքիւր ծառայող լեզուն ոչ միայն վրացերէնը չէ, այլ և մեզ ծանօթ լեզուներից ոչ մէկը չէ։ այլ արդի վրացական աշխարհից աւելի հարաւ (Հայաստանին աւելի մօտիկ) գտնուած մի ուրիշ լեզու, որ այժմ կորած է և որի մօտիկ ներկայացուցիչներն են արդի լազերէնն ու մինզրելերէնը։ Այդ լեզուն անշուշտ խօսում էին Գուգարքի և Տայքի նախկին բնիկները։

3. Այն բառերը՝ որոնք գործածուած են մեր գրականութեան մէջ աւելի ուշ ժամանակ և բացառապէս նման են վրացերէնին. օրինակ՝

Ծէս	—	վրաց. ծեսի
թոկ	—	» թոկի
բալզինջ	—	» բալզինջո ևն։

Այս կարգի բառերը փոխ առնուած են ուղղակի վրացերէնից (անշուշտ հին փոխառու անծանօթ լեզուն այլ ևս ձուլուած լինելով կամ հայերէնի և կամ վրացերէնի մէջ)։

ՊՐՈՖ. Հ. ԱՇԱԽԵՍՅԱՆ

(Եպիսկոպոսիում)